ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» սեպտեմբերի 2017 թվականի N 192-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Սյուզաննա Գրիգորի Ղևոնդյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 20-րդ փողոցի թիվ 18 հասցեի տնամերձ հողակտորում տալ բնակելի տան և պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն:

2. Պարտավորեցնել Սյուզաննա Գրիգորի Ղևոնդյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» սեպտեմբերի 2017 թվականի N 193-Ա

ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

Աբգար Մրազի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 07-057-0347-0004 կադաստրային համարի 2-րդ դաշտի թիվ 6/4, 6/19 հասցեի հողակտորում թույլատրել քանդելու անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2808499 վկայականում նշված թիվ 5 շինությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» սեպտեմբերի 2017 թվականի N 194-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով 2017 թվականի սեպտեմբերի 26-ին Ջրվեժի համայնքապետարանում կայացած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդի NN 3/1-3/4 արձանագրությունները, ***որոշում եմ.***

1. Հաստատել համայնքային սեփականություն հանդիսացող հողերի 2017 թվականի սեպտեմբերի 26-ին կայացած աճուրդի արդյունքները և աճուրդային վաճառքի հաղթողներին տրամադրել հողամասեր, համաձայն NN 1-2 հավելվածների:

2. Հանձնարարել աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանին՝ սահմանված ժամկետում ապահովել սույն որոշմամբ աճուրդում հաղթող (գնորդ) ճանաչված անձանց կողմից վճարման ենթակա գումարների մուծումը (փոխանցումը) Ջրվեժ համայնքի 900105228176 հաշվարկային հաշվին:

3. Լիազորել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանին՝ աճուրդով գնված հողամասերի վճարման ենթակա գումարների (սահմանված ժամկետում ու կարգով) վճարումը կատարելուց հետո, աճուրդում հաղթողներին ապահովել հողամասի հատակագծով, նշահարման ակտով և կնքել հողամասերի օտարման պայմանագրեր:

4. Ընդունել ի գիտություն, որ հողամասերի օտարման պայմանագրերը ենթակա են նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

5. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետին, ապահովել հողամասերի աճուրդային վաճառքին մասնակից, չհաղթած և աճուրդին չներկայացած հայտատուների կողմից Ջրվեժ համայնքի 900105228176 հաշվարկային հաշվին մուծված նախավճարների վերադարձը, համաձայն N 3 հավելվածի:

6. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 26
գ. Ջրվեժ

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2017 թվականի
սեպտեմբերի 26-ի N 194-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1.Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝ Միսակ Աշոտիկի Քերոբյան, անձնագիր 001919257, տրված 2014 թվականի ապրիլի 22-ին 099-ի կողմից, հասցեն՝ Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ, 6-րդ փողոց, 2-րդ փակուղի, թիվ 17 տուն:

2. Գնորդը մուծել է՝

1)900105228119 հ/հ՝ մասնակցության վճար 10 000 դրամ, անդորրագիր N 000337, մուծված 2017 թվականի սեպտեմբերի 23-ին:

2)900105228176 հ/հ՝ նախավճար 167 000 դրամ, անդորրագիր N 000074, մուծված 2017 թվականի սեպտեմբերի 26-ին:

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝

բնակելի տան կառուցման համար, գյուղ Ջրվեժ, 34-րդ փողոց, թիվ 16:

4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝

07-057-962-002; 7; 739,0 քառ.մ; 3 325 500 դրամ:

5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը՝ 3 492 500 դրամ:

6. Ենթակա է վճարման (հաշվի առնելով մուծված նախավճարը)՝ 3 325 500 դրամ:

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2017 թվականի
սեպտեմբերի 26-ի N 194-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՂԹՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1.Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝ Սրապ Ալիդայի Պետրոսյան, անձնագիր 002877926, տրված 2015 թվականի ապրիլի 28-ին 005-ի կողմից, հասցեն՝ Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ, 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 12 տուն:

2. Գնորդը մուծել է՝

1)900105228119 հ/հ՝ մասնակցության վճար 10 000 դրամ, անդորրագիր N 000339, մուծված 2017 թվականի սեպտեմբերի 23-ին:

2)900105228176 հ/հ՝ նախավճար 225 000 դրամ, անդորրագիր N 000072, մուծված 2017 թվականի սեպտեմբերի 26-ին:

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝

բնակելի տան կառուցման համար, գյուղ Ջրվեժ, 36-րդ փողոց, թիվ 6:

4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝

07-057-936-014; 10; 1000,0 քառ.մ; 4 500 000 դրամ:

5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը՝ 4 725 000 դրամ:

6. Ենթակա է վճարման (հաշվի առնելով մուծված նախավճարը)՝ 4 500 000 դրամ:

Հավելված 3
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2017 թվականի
սեպտեմբերի 26-ի N 194-Ա որոշման

ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ, ՉՀԱՂԹԱԾ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ 900105228176 Հ/Հ ՄՈՒԾՎԱԾ ՆԱԽԱՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ

1. Միսակ Աշոտիկի Քերոբյան, (անձնագիր 001919257, տրված 2014 թվականի ապրիլի 22-ին 099-ի կողմից, հասցեն՝ Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ, 6-րդ փողոց, 2-րդ փակուղի, թիվ 17 տուն), 225 000 դրամ, անդորրագիր N 000075, մուծված 2017 թվականի սեպտեմբերի 26-ին:

2. Սրապ Ալիդայի Պետրոսյան, (անձնագիր 002877926, տրված 2015 թվականի ապրիլի 28-ին 005-ի կողմից, հասցեն՝ Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ, 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 12 տուն, 167 000 դրամ, անդորրագիր N 000072, մուծված 2017 թվականի սեպտեմբերի 26-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» սեպտեմբերի 2017 թվականի N 195-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրվեժի համայնքապետարան է դիմել քաղաքացի Ռոզա Ուսոյի Քարամյանը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 21-րդ փողոցի թիվ 129 հասցեում գտնվող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N 2536933, տրված 2008 թվականի նոյեմբերի 12-ին), կառուցապատված հողամասին կից, ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով իրեն օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող 21-րդ փողոցի թիվ 29/1 հասցեում գտնվող 07-057-0118-0014 կադաստրային համարի 185,39 քառ.մ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 25092017-07-0035, տրված 2017 թվականի սեպտեմբերի 25-ին):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 28-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1. Ռոզա Ուսոյի Քարամյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 21-րդ փողոցի թիվ 129 հասցեում գտնվող կառուցապատված հողամասին կից՝ 21-րդ փողոցի թիվ 29/1 հասցեում գտնվող 185,39 քառ.մետր մակերեսով հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով օտարել իրեն՝ կադաստրային արժեքով:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը սույն որոշման ընդունումից հետո, 15-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228176 հաշվին պետք է վճարի հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 838 705 (ութ հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր հինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Լիազորել Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանին՝ համայնքապետարանի անունից հողօգտագործողի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4. Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո, հողամասը ձեռք բերողի կողմից 15-օրյա ժամկետում վճարումները չկատարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Ընդունել ի գիտություն, որ առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:

6. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 27
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» սեպտեմբերի 2017 թվականի N 196-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Քրիստինա Ռոբերտի Պետրոսյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

Քրիստինա Ռոբերտի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 46-րդ փողոցի թիվ 58, 60 և 62 հասցեների հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 46-րդ փողոց, թիվ 58-62:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» սեպտեմբերի 2017 թվականի N 197-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Ռոզա Ուսոյի Քարամյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

Ռոզա Ուսոյի Քարամյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 21-րդ փողոցի թիվ 129 և 21-րդ փողոցի թիվ 29/1 հասցեների հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 21-րդ փողոց, թիվ 29:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» սեպտեմբերի 2017 թվականի N 198-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Կաքավիկ Օնիկի Առաքելյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

Կաքավիկ Օնիկի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի Այգեգործական 27-րդ թաղամասի թիվ 1 և 27-րդ թաղամասի թիվ 1/1 հասցեների հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Այգեգործական 27-րդ թաղամաս, թիվ 1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» սեպտեմբերի 2017 թվականի N 199-Ա

ԱԼԵՔՍ ԳՐԻԳՈՐԻԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշումով և հիմք ընդունելով համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 27-ի եզրակացությունը անչափահաս Ալեքս Գրիգորիի Հարությունյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին, ***որոշում եմ.***

Ջրվեժ համայնքի Մելքոնյան փողոցի թիվ 68 տան բնակիչ, 2007 թվականի մարտի 10-ին ծնված Ալեքս Գրիգորիի Հարությունյանի նկատմամբ սահմանել խնամակալություն և խնամակալ նշանակել նույն հասցեում բնակվող տատին՝ Ռիտա Ալեքսանդրի Հարությունյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 28
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» սեպտեմբերի 2017 թվականի N 200-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Էդուարդ Զարգարյանը՝ հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չի կատարել Ջրվեժ համայնքի բյուջեի հանդեպ հարկերը վճարելու պարտավորությունը, ինչի կապակցությամբ 2016 թվականի դեկտեմբերի 9-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածը, Էդուարդ Զարգարյանը մարել էր գույքահարկի պարտավորության 20 տոկոսը և կնքել գույքահարկի պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց վեց ամիս ժամկետով:

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 28-ին տրված N 143559957791115546 տեղեկանքի Էդուարդ Զարգարյանը Ջրվեժ համայնքի բյուջեի հանդեպ մարել է VOLVO S60 2.5 մակնիշի 93 MS 999 պետական համարանիշի փոխադրամիջոցի հարկային պարտավորությունները 2013-2016 թվականների համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, հոդվածներով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Էդուարդ Զարգարյանի նկատմամբ 2016 թվականի դեկտեմբերի 9-ին հարուցված վարչական վարույթը կարճել:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջրվեժ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է աշխատակազմի քարտուղարը:

4.Որոշման մեկ օրինակը եռօրյա ժամկետում հանձնել Էդուարդ Զարգարյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 28
գ.Ջրվեժ